



ԲԱԶՄԱՎԵՊ

ՌՅԺՀ. 1866—ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ. — ԴԵԿՏԵՄԲԵՐ

Թ. Ղ. Թ. Ա. Գ. Ո Ր Ծ Ո Ւ Թ Ւ Ի Ն

(Ըարտունակութիւն. էջ 521:)

Թղրոյ գործարանաց թիւր այլ և այլ աշխարհներու մէջ : — Գաղղիա երկու հարիւր յիսուն գործարան կը համրուի , որոց մէջ երեք հարիւր յիսունի չափ մեքենայ կան : Ամեն տարի այս գործարաններէն ութսուն միլիոն հազարագրամ թուղթ կ'ենէ ամեն տեսակ : — Անգղիայէն ամեն տարի կ'ենէ հարիւր միլիոն հազարագրամ թուղթ : Այս 180 միլիոն հազարագրամ թուղթը 64 միլիոն բնակչաց կը բաւէ : Միացեալ նահանգները , որոց բնակիչները 28 միլիոն են , ամեն տարի երկու հարիւր միլիոն հազարագրամ թուղթ կը գործածեն , հանելով իրենց գործարաններէն : Միացեալ նահանգաց մէջ թղթոյ անբաւ գործածութեան պատճառը , իրենց անթիւ լրացիրներն են : Շատ մը համբաւաւոր թուղթի գործարաններ կան նաև գերմանիոյ մէջ :

Ցնցոտիները բաւական չեն այսչափ թուղթ շինելու համար , որոյ գործածութիւնը օրէ օր կը յաճախէ : Ասոր համար մտածեցին այլ և այլ հիւսուածոյ բուսական նիւթեր գործածել , ինչպէս արմաւենի , պանան , յարդ , և այլն : Տեղ տեղ փորձեցին նաև այս նիւթերով թուղթ շինել . բայց շինութիւնը այն չափ ծանրագին կ'ըլլայ , մանաւանդ աղնիւ թուղթերու համար , որ դեռ խնդիրը լուծուած չսեպուիր : Ուղեցին հանգային գոյացութիւններ ալ գործածել , ինչպէս ծծըմբատ կրոյ , կշռուն կան , կապարոյ , կաւիճ և քաղլին : Այն թուղթերու մէջ որ այս նիւթերը շատ խառնուած են , գէշ են , հաստատութիւն չունին , ու ասելի կը կցուեն : Ծնտիր գործարաններու մէջ այս նիւթերը միայն հասարակ թուղթերու համար կը գործածեն , ինչպէս շաքարնե-

բուն գլուխները և ճարպային մոմերը
փաթութերու համար :

Հիմա տեսնեմք թղթոց գլխաւոր տե-
սակները :

Սոյսի կեղևանք ըստքած բուղդը¹ :
— Այս թուղթը ամենաբարակ ըլլա-
լուն համար այսպէս ըսուած է, և կը
շնուի կարծր ցնցոտիներէ : Ճերմակ ու
դիւրածալ է . զոր մլրատով կամ գոր-
ծով կը կտրեն այլ և այլ ձեւով : Այս
տեսակ թուղթը՝ տուփի մէջ զրուած
չափարները ծածկերու համար կը գոր-
ծածուի, նոյնպէս զեղխութեան վերա-
բերեալ նիւթերը ծածկելու, ու փորա-
գրութեանց համար, և այն :

Օձի բուղդը² : — Անսոսինձ ու ամե-
նաբարակ թուղթ մի է, որով փորա-
գրութիւնները կը պատեն, և կ'ըլլայ
զանազան գոյներով :

Յովկերիեան կամ մետաքսեայ
բուղդը³ : — Այս թուղթը Յովկէփ Մոն-
կոլիքիէի անուամբ կոչուած է, որոյ գոր-
ծածութիւնը շատ յաճախեալ է ոսկե-
զօծիչներու, չափարաշէններու ու տար-
բագէտներու մէջ :

Մզելու բուղդը⁴ : — Այս թուղթը սո-
սրնձած չէ ու աւելի կամ նուազ ճեր-
մակ է ու հաստատուն : Մզելու թուղ-
թին ազնուագոյն տեսակը Շուռետի մէջ
կը շինուի : Զմեռ ատեն կը շինեն ու սա-
ռոցի միջոց կը չորցունեն : Զուրը գո-
լորչի դառնալէն առաջ կը սառի անոր
վրայ ու ծակ ծակ կ'ընէ :

Ճենաց բուղդը⁵ : — Տեսակ մը թուղթ
կը շինուի ճենաստանի մէջ քուշու ը-
սուած ծառին կեղևէն, որ պամպու
ըսուած ծառին մէկ տեսակն է : Այս
թուղթը ազնիւ ըլլալու համար, պէտք
է որ բարակ ըլլայ, գոյնը զեղինի զար-
կած, կամ քիչ մը գորշ, մէկ երեսը ո-
րորկ ու միւս երեսը անողորկ : Անողորկ
կողմին վրայ թելեր ու անհարթութէք

կ'երևին . իսկ ողորկ կողմը բոլորովին
շխտակ ու տափարակ է : Այս թուղթը
իրեն զանգուածին ընտիր ըլլալուն հա-
մար նշանաւոր է, ու շատ յարդի է փո-
րագրութեանց ու վիմագրովթեանց հա-
մար . դարձեալ սա է միայն, որոյ վրայ
պատկերահանը կամ փորագրողը ճիշդ
կերպով կրնայ քաշել իր ուրուագիծ
պատկերները :

Գունեաւոր, մարմարեայ կամ սե-
կանեան բուղդը⁶ : — Գունաւոր թուղ-
թերը թանձր ու սոսրնձած են, և սո-
վորաբար վեց գունով կ'ըլլան, դեղին,
կարմիր, կանաչ, կապոյտ, բացագոյն
դեղին և բացագոյն կարմիր : Գունաւոր
թուղթերը կը գործածուին կազմած
գիրքերուն կողքին համար, պաստելեան
ուրուագծութեանց, չափարավաճառաց,
և այն :

Իսկ մարմարեայ կամ սեկանման
թուղթերը, որ զօրաւոր, թանձր ու
սոսրնձած են, միայն գիրքերու կողքին
համար կը գործածուին ու շատ յարդի
են : Եւ այսպէս կոչուած ըլլանուն պատ-
ճառն է, միոյն մարմարինի պէս ողորկ
ու փայլուն ըլլալը, միւսոյն Մարոքի սե-
կին նման ըլլալը :

Փարուրելու բուղդ . չափարի բուղդը⁷ :
— Ասոնք թանձր հասարակ թուղթեր
են այլ և այլ գոյներով, որոնցմով այլ և
այլ բաներ և չափարի գլուխներ կը փա-
թուղթեն :

Զիշրեղէն բուղդը⁸ : — Այս թուղթը
հին ու ձիւթուած չուաններէ կը շի-
նուի, որոյ գործածութիւնը հիմա խիստ
յաճախեած է այլ և այլ բաներ փաթու-
թելու համար :

Ծրանանելու բուղդը⁹ : — Այս թուղ-
թը թափանցիկ է և երկք տեսակ ու-
նի, իշղուած բուղդը⁶, Զնարակեալ
բուղդը⁶, և Բուշակեան բուղդը⁷ : Իւղո-

¹ Papier de couleur կամ coloré, marbré, ma-roquiné.

² Papier d'asbalage, կամ à sucre.

³ Papier goudron.

⁴ Papier à calquer.

⁵ Papier huilé.

⁶ Papier verni.

⁷ Papier végétal.

¹ Papier dit peiture d'oignon.

² Papier serpenté.

³ Papier Joseph կամ papier de soie.

⁴ Papier à filtre.

⁵ Papier de Chine.

տածը աժան է, ու կը պատի բարակ խատով մը բմեկնոյ կամ ընկուզի եղէ։ Զնարակեալը կը պատի ռետնային բարակ խաւով մը, որ գիւրաբեկ է։ իսկ բուսականը ամենէն աւելի ընտիրն է ու թափանցիկ, ոչ կը գեղնի ու ոչ ալ ուրուագիծ պատկերը կ'աղտոտէ։ Մէկաներէն աւելի թանկադին է այս տեսակը։

Յարդի բուշիր¹։ — իսկզբանէ հետէ շատ մը արտօնութիւններ տրուցան յարդի թղթոյն շինութեան, այնու հանգերձ գեռ կարելի չեղաւ բոլորովին կատարելագործել։ Յարդի թուղթը դեղնորակ կ'ըլլայ, սև մազմզուկներ կ'ունենայ. զանգուածն ալ հաւասար չէ։ Ծալելով ու ճմելով՝ ցնցոտիներէ շինուած թուղթէն աւելի կը պատուի ու կը ճեղքուի։ կրպակներու մէջ կը գործածուի մանր բաներ փաթութելու համար։

Դրազ մեալ բուշիր²։ — Այս թուղթին վրայ յիշատակութիւն կայ Յուստիանոս կայսեր ժամանակէն. ձեռքով կը շինուի ու մածուցի կը սոսրնձի։ Այս թուղթը շինելու ժամանակ, որ և իցէ տէրութեան դրոշմ մը կը տպեն վրան զանազան գունով, որ հարկահանութեան կերպ մ'է։ Գաղղիոյ մէջ մէկ միլիոն հազարագրամի չափ դրոշմեալ թուղթ կը շինուի։

Թանձրաբուշիր³։ — թանձրաթուղթը երկու տեսակ է, մին սոսրնձած, միւսը աղացած։ Սուրլնձեալ բանձրաբուշիրը՝ կը շինուի ուղած թանձրութեամբ իրարու հետ սուրնձելով թղթոյ այլ և այլ թերթեր։ Ճերմակ թերթեր կը գործածուին, թէ որ թանձրաթուղթը յատակագծի, ուրուագրութեան և այցելութեց տունակներու համար պէտք ըլլան։ Թէ որ ուրիշ բաներու պիտի գործածուի, մէջ տեղ թիսագոյն հասարակ թուղթ կը գրուի ու երեսին վրայ ճերմակ։ Այսպէս թուղթերը սո-

ունձելէն ետքը մամուլներու տակ պէտք է զնել, որոց ճնշումը հետզհետէ կ'ամենայ, որչափ որ սոսինձը չըրնայ։ Յետոյ տարածել, որպէս զի բոլորովին չըրնայ։ և նորէն մամուլներով ճնշել բոլորովին շիտակցնելու համար. վերջը թիթեղնոցէ անցունել երկու զբնկեղէն տախտակներու մէջ։ Եւ երբ ուզեն ողորկել ու փայլեցնել, պէտք է քիչ մը օճառ տարածել երկու երեսներուն վլրայ, ու երկու կողմերն ալ չփել իմովլ մը, որ ողորկիչ⁴ կ'ըսուի։ Այս գործողութիւնը կամ ձեռքով և կամ մեքենայով կը կատարուի։

Անգղիական թանձրաթուղթը, որ կոչի, Պրիմարոյ, կը շինուի այն տաշտակազմ թուղթերէն, որք ընտիր ցնցուիներէ շինուած են, որոց մէջ կը մտնէ նաև քառոլին։

Աղացեալ բանձրաբուշիր⁵ ըսուածը հին թուղթերէ կը շինուի, ինչպէս նաև հասարակ ցնցուիներէ, չուանի և չուխայի կտորներէ, թանձրաթուղթերէ, և վերջապէս թղթագործութեան այն ամենն մնացորդներէն, զորս կը փուցունեն՝ ուրիշ տեսակ նիւթերէ զատելու համար. յետոյ զանգուածը կը մալեն զաղաթնահայեաց երկաններով։ Զանցուածը այս կերպով պատրաստուելէն ետքը, կը թափուի մետաղական գաղափարներու մէջ, որք շրջանակի մէջ դըրուած են։

Քարեղէն բանձրաբուշիր⁶։ — Քարեղէն թանձրաթուղթը կը շինուի, թղթոյ զանցուածին հետ խառներով լուծեալ մածոյց, շաղախ⁷, կաւ և կաւիճ։

Կպրուսած բանձրաբուշիր⁸։ — Կը պրոտած թանձրաթուղթը իրեն օգտակարութեամբը կղմնտրի տեղ կը բռնէ, մանաւանդ թեթեւ շինուածներու համար. նոյնպէս կը գործածուի թիթղաքարերու և զբնկոյ տեղ, որով տանիք.

¹ Lissoir.

² Carton de moulage.

³ Carton-pierre.

⁴ Ciment.

⁵ Carton bitumé.

¹ Papier de paille.

² Papier timbré.

³ Carton.

⁴ Carton de collage.

ները կը պատեն : կը դիմանայ թէ ցըրտութեան և թէ ջերմութեան : Ասուեղէն թաղիքի տեսակէ մը կը շինուի, որոյ մի կամ երկու կողմն ալ պատաժ կ'ըլլայ բաղադրութեամբ մը, որոյ արմատն է հանքածիոյ հալած կուպր,

զոր տաք տաք թանձրաթողթին վրայ կը դնեն, որ անոր հետ միանալով կաշի մը կը ձևացնէ, զոր պէտք է աւազել ու թիթեղնոցէ անցունել: Դժուարաւ կ'այրի և չըռըրպեիր :

Թուշը ապակեալ և զմիռիխուեալ, որ կոյի նաև բուղոր փայլեցնելոյ¹: — Թուղթը ապակելու և զմիռիտելու համար, պէտք է գաղափարեալ թուղթ գործածել, ու անոր երեսները տաք ու հեղուկ սոսրնձով օծել, և անոր վրայ մաղելով ցանել ապակւոյ կամ զմիռիտի փոշոյ նուլը խաւ մը, և տարածել հաւասար կերպով: Յետոյ թեթև մը ցնցել, որպէս զի այն աւելորդ մասունքը որք թուղթին երեսը կպած չեն, վար իյնան: Տարածել չուաններու վլրայ, և երբոր չորնայ, շտկեցնել ու երկրորդ անգամ սոսրնձի խաւ մը տալ, որ թուղթին երեսին վրայ հաստատուն կը բռնէ զփոյին, առանց որոյ պէտք եղած կերպով չկաչիր: Յետոյ չուաններու վրայ տարածելով չորցնել, շտկեցնել, կտոր կտոր կտորել ու վաճառելու խաւգել: Չորցնելու կերպը փայլեցնելու թուղթին յատկութեանց վրայ մեծ աղեցութիւն ունի. թէ որ չուտ մը չորնայ, կարծր ու բեկանուտ կ'ըմայ. և թէ որ շատ ծանր չորնայ, սոսինձը կ'այլայլի ու փոշին դիւրաւ կը բաժնուի թուղթին երեսէն:

Բուսական մագաղաք²: — Անսուսինձ թուղթը քանի մը վայրկեան ծըծլը մագական թթուուտի մէջ կենալով, ուրիշ նիւթոյ կը փոխուի, որ սովորական մագաղաթի կը նմանի և կոչի բուսական մագաղաք: Բայց թթուուտը հաւասար տարածոցաւ ջրոյ հետ խառնուած պիտի ըլլայ, ու 15°, 5 ջերմութէ

հասած: Այս նիւթը լուսաթափանց է, կոռական, զիւրածալ ու ջուրը մէջը չկրնար թափանցել: Ինչ բաներու որ սովորական մագաղաթը կը գործածուի, բուսականն ալ կը նայ գործածուի նոյն բաներու:

Հ. Մ. Ք.

Արևելեան առաջներ.

Բարեկամութեան առաջին կանոնն է պիտանի ըլլալ:

Տգիտաց պարզեները աղբի վրայ տընկած գեղեցիկ ծաղկանց կը նմանին:

Զարագործաց յանցանքը ատէ. բայց երբ կը դառնայ յառաքինութիւն, ընդունէ զայն քու ծոցդ, իբրև թէ յանցանքը ըլլած ըլլար:

Երբոր կ'ուղես որ արդիւնքդ ճանչցուի՛ ճանչցէր դու ալ ուրիշներունը:

Լաւ է առանձին ըլլալ, քան չարերու ընկերութեան մէջ:

Քիչ խօսքը կատարեալ իմաստութեան նշանն է:

Անկիրթը՝ առանց հոգւոյ մարմնոյ մը կը նմանի:

Մի ուղեր և մի փափաքիր անկարելուն :

Լաւ գիրք մը լաւագոյն բարեկամ է. սիրով կը խօսակցիս անոր հետ, երբոր չունիս մէկ մը՝ որուն վրայ վստահանաս. անիկա չկյայտներ քու գաղտնիքներդ, և քեզի իմաստութիւն կը սորուեցնէ:

Ցանձնէ ազգականներու և խնամիներու որ մէկզմէկ տեսնեն և մէկմէկու այցելութեան երթան, բայց մի յանձներ որ դրակից ըլլան:

Համբերութեամբ կը համնի մարդ իր խորհրդոց նպատակին:

¹ Papier verré et émerisé, կամ պատեր առաջանական մագաղաք.

² Parchemin végétal.